ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Պայմանագրի համարը, ամսաթիվը	«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/19/2» «26» 07 2018թ.
2. Պայմանագրի կողմը	«Զավեն Եղիազարյան» Ա/Ձ (անվանումը)
3. Պայմանագրի առարկան	Switch MICON h35-V2 օպտիկական կոմուտատորի ձեռքբերում
4. Պայմանագրի գումարը	**670.000** ՀՀ դրամ (ԱԱՀ վճարող չէ)
5. Պայմանագրի գործողության ժամկետը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օր
6. Գնումների կատարման ծածկագիրը	«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/19»
7. Հայտերի բացման ամսաթիվը	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
1.	Մասնաճյուղերը համակարգող տնօրեն	Կ. Մկրտչյան	
2.	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	Վ. Մարտիրոսյան	
3.	Մատակարարման բաժնի պետ	Ռ. Ալբերտյան	
4.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Կ. Մելքոնյան	
5.	Գլխավոր հաշվապահ	Գ. Մուրադյան	

ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/19/2

ք. Երևան «26» 07 20/8 թ.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և

Անհատ ձեռնարկատեր Զավեն Սերյոժայի Եղիազարյանը (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված Օպտիկական կոմուտատոր Switch MICON h35-V2 (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

2.1.8 Հնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 670.000 (վեց հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ: Վաճառողը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 2 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված Ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը հաստատվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված Ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված

միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Գնորդն իրավունք ունի Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Գնորդն իրավունք ունի Վաճառողից գանձել տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար Վաճառողի կողմից կարող է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները

և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.10 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՎԱՃԱՌՈՂ	ԳՆՈՐԴ
«Զավեն Եղիազարյան Սերյոժայի» Ա/Ձ	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 59/7, բն. 12	Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 2474702852370000	Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 86215812	ՀՎՀՀ 01522459
_____ Զ. Եղիազարյան	_____ Ա. Հովակիմյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
«26» 07 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/19/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Բ	Ապրանքի անվանումը	տեխնիկական բնութագիրը	Ընդհանուր քանակը	չափման միավորը	Ընդհանուր գինը ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)
4	Օպտիկական կոմուտատոր Switch MICON h35-V2	Կոմուտատորը պետք է համապատասխանի IEC 61000-4 և 60255-5: Ethernet մուտքերի քանակ 6 հատ օպտիկական մուտքերի քանակ 2 հատ STտիպի Կոմուտատորը գործողության մեջ դնելուց պետք է պատրաստ լինի աշխատանքի առանց հավելյալ կարգավորումների: Ղեկավարվում է SNMP պրոտոկոլով: Անսարքության հայտնաբերման դեպքում կատարվում է արագ վերակարգաբերում RSTP պրոտոկոլով:	1	հատ	670.000

Այլ պայմաններ	
Երաշխիքային ժամկետը	Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **2 (երկու) տարի**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
Մատակարարման վայրը	ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
Մատակարարման ժամկետը	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում

ՎԱՃԱՌՈՂ
«Զավեն Եղիազարյան Սերյոժայի» Ա/Ձ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 59/7, բն. 12
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474702852370000
ՀՎՀՀ 86215812

_____ **Զ. Եղիազարյան**
(ստորագրություն)

ԳՆՈՐԴ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ **Ա. Հովակիմյան**
(ստորագրություն)

Հավելված N 2
«26» 07 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/19/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երկկողմանի ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում

ՎԱՃԱՌՈՂ
«Զավեն Եղիազարյան Սերյոժայի» Ա/Ձ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 59/7, բն. 12
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474702852370000
ՀՎՀՀ 86215812

_____ **Զ. Եղիազարյան**
(ստորագրություն)

ԳՆՈՐԴ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ **Ա. Հովակիմյան**
(ստորագրություն)

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/19/2 ծածկագրով պայմանագրի

ՎԱՃԱՌՈՂ	ԳՆՈՐԴ
«Զավեն Եղիազարյան Սերյոժայի» Ա/Ձ	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 59/7, բն. 12	Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ
Հ/Հ 2474702852370000	Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 86215812	ՀՎՀՀ 01522459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ Ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ Ապրանքները՝

N	Մատակարարված Ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ Ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/19/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված Ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

MINISTRY OF ENERGY INFRASTRUCTURES
AND NATURAL RESOURCES
OF THE RoA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS"CJS
GENERAL DIRECTOR

0084 Հայաստան, Երևան,Զոր. Անդրանիկի 1,
Հեռ. 010 72 00 10: Ֆաքս 010 72 01 21

0084 Armenia, Zor. Andranik st.1, Yereva
Tel: 010 72 00 10: Fax: 010 72 01 2

МИНИСТЕРСТВО ЭНЕРГЕТИЧЕСКИХ ИНФРАСТРУКТУР
И ПРИРОДНЫХ РЕСУРСОВ РА
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР
0084, Армения, Ереван, ул.Зор. Андраника 1
Тел: 010 72 00 10: Факс 010 72 01 21
E-mail: info@hven.am, www.hven.am

No. 58-Հ
«15» 06 2018թ.

ՀՐԱՄԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 2018թ. գնումների պլանի՝ ընկերության կարիքների համար անհրաժեշտ էլեկտրական սարքերի և պահեստամասերի գնման մասին

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կազմավորել գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝

Լևոն Ադամյան	տեխնիկական տնօրեն

Անդամներ՝

Արսեն Հարությունյան	ռելեական պաշտպանության ավտոմատիկայի և բարձրավոլտ փորձարկումների ծառայության պետ
Դավիթ Գասպարյան	մատակարարման բաժնի մասնագետ
Մելինե Սողոյան	մարքեթինգի բաժնի մարքեթոլոգ
Նարեկ Գեդեոնյան	ռելեական պաշտպանության ավտոմատիկայի և բարձրավոլտ փորձարկումների ծառայության պետի տեղակալ

Քարտուղար՝

Ռոմեո Ալբերտյան	մատակարարման բաժնի պետի տեղակալ

2. Հանձնաժողովին՝ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել գնանշման հարցման գնման ընթացակարգ՝ ընկերության կարիքների համար անհրաժեշտ էլեկտրական սարքերի և պահեստամասերի ձեռքբերման նպատակով:
3. Հանձնաժողովի առաջին նիստը գումարել սույն թվականի հունիսի 15-ին ժ. 12:00-ին:
4.Սույն հրամանի կատարման պատասխանատվությունը դնել ընկերության մատակարարման բաժնի պետի տեղակալի վրա:

Արտակ Հովակիմյան

Հաստատում եմ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Տեխնիկական տնօրեն
_____ Լևոն Ադամյան

«_____» _____ 2018թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կարիքների համար էլեկտրական սարքերի և պահեստամասերի գնման հայտ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կարիքների համար էլեկտրական սարքերի և պահեստամասերի գնման հայտի հատկանիշները ըստ կցված հայտի:

Ռելեական պաշտպանության ավտոմատիկայի
և բարձրավոլտ փորձարկումների ծառայության պետ Արսեն Հարությունյան

Հայտ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար
էլեկտրոնային սարքավորումների գնման թվով վեց չափաբաժնով

Չափաբաժնի հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Բնութագիրը
1	2	3	4	5
1	**10 կՎ բջջի ուղեկապման կոճ**	հատ	2	Նոմինալ լարումը 220Վ հաստատուն հոսանք YES 1368960362 YD 202
2	**Միկրոկոնտրոլերների ծրագրավորող սարք (ծրագրով)**	հատ	1	Պետք է ունենա միակցման հնարավորություն հետևյալ սարքերի հետ՝ Ֆլեշ-հիշողություն/զուգահեռ,հաջորդական, NEND/, EPROM, EEPROM, Serial EEPROM, NVRAM, CPLD, PLD,FPGA: 48 հպակով ZIF կցորդիչ և 10 հպակով ISP/JTAG վարդակով: Պետք է աշխատի հետևյալ միկրոկոնտրոլերների հետ ATMEI՝ բոլոր 8բիտ չիպերը, ATXMEGA սերիայի միկրոկոնտրոլերները PDI և JTAG մեթոդով: C51 սերիայի ամբողջ տեսականու հետ, Microchip PIC միկրոկոնտրոլերների ողջ տեսականու հետ, այդ թվում PIC12F/PIC12C/PIC16C/PIC16F/PIC18F/DPIC33F/J&K. մինչև 40 pin ունեցող սարքերը պետք է ծրագրավորվեն ZIF-ով, և ավտոմատ ճանաչվեն ISP մալուխով: INTEL, ST, SST, Philips, Motorola, Syncmos, Silicon Lab, ICSI, Infineon, Windpond Մատչելի ծրագրով/անգլերեն և ռուսերեն լեզվով/ որը աշխատում է Windows 7,8(32,64bit) համակարգում: Սարքը պետք է ունենա հետևյալ ադապտերները՝ SOP28-DIP28 300mil, SOP8-DIP8 200-208mil, SOP8-DIP8 150mil, TSSOP28 to DIP28, SOP16 TO DIP16, SOP20-DIP20(200~208mil), TSOP32-DIP32, PLCC44-DIP44, PLCC32-DIP32, PLCC28-DIP24, PLCC20-DIP20, TSOP48-DIP48, TQFP44-DIP40, SOP16/S0P8:
3	**Փոխակերպիչ Salicru CS 2000-IS-B/220-230**	հատ	1	• Չափերը պետք է համապատասխան լինեն հետևյալին՝ 385x483x40 մմ • Մուտքային լարումը 230Վ հաստատուն • Ելքային լարումը 220Վ փոփոխական • Հզորությունը 2000Վտ • Հաճախությունը 50/60 Հց • Փոխանջատման արագությունը 100 մվ • Աշխատանքային ջերմաստիճան -10°C...+40°C • Բարձրությունը ծովի մակարդակից 2400 մ
4	**Օպտիկական կոմուտատոր Switch MICOM h35-V2**	հատ	1	Կոմուտատորը պետք է համապատասխանի IEC 61000-4 և 60255-5: Ethernet մուտքերի քանակ 6 հատ օպտիկական մուտքերի քանակ 2 հատ STտիպի Կոմուտատորը գործողության մեջ դնելուց պետք է

				պատրաստ լինի աշխատանքի առանց հավելյալ կարգավորումների: Ղեկավարվում է SNMP պրոտոկոլով: Անսարքության հայտնաբերման դեպքում կատարվում է արագ վերակարգաբերում RSTP պրոտոկոլով:
5	**Էլ վահանի տաքացուցիչ թերմոստատով**	հատ	4	Հզորություն 90W Լարում 220-240Վ Աշխատանքային ջերմաստիճան -40°C...+70°C Հնարավորություն պետք է ունենա ամրանալու «din» տեսակի ձողին Միացման լարերը 3x0,75մմ^2 Չափերը 142x72x49մմ
6	**Սեղմակաշար 3427 16մմ**	հատ	10	Լարումը 750Վ Չափսերը պետք է համապատասխանեն՝ լայնություն 55մմ բարձրություն 55մմ Հնարավորություն պետք է ունենա ամրանալու «din» տեսակի ձողին

Այլ պայմաններ	
Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները	Մասնակիցը պետք է բավարարի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված՝ ՀՀ կառավարության 04/05/17թ. N526 որոշմամբ՝ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով ներկայացվող պահանջներին
Վճարման պայմաններ՝	Հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օր
Գնման ձևը (ընթացակարգ)	Գնանշման հարցում
Երաշխիքային ժամկետը	չափաբաժիններով սահմանված ապրանքների երաշխիքային սպասարկման ժամկետը սահմանվում է հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն երկու տարի
Մատակարարման վայրը	ք.Երևան, Զ.Անդրանիկի 1
Ապրանքի մատակարարման ժամկետ	
Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից – 60 օրացուցային օրվա ընթացքում	

ՌՊԱ և ԲՓԾ պետ Արսեն Հարությունյան